 16 Բշ. ԳԿ. Տրդատայ թագաւորին եւ Աս-
 խէն իկնոց եւ Խաւրովիլիսոյ
 17 Դշ. ԴՃ. Որդւոց եւ թաւանց Ս. Լաւշին
 18 Դշ. ԴԿ. Պահոց
 19 Եշ. աճ. Ս. Եղիսիի Մարգարէին
 20 Ուրբ. աԿ. Պահոց
 21 Եթ. թճ. Սրբոց ժԲ. առաքելացն Քրիս-
 տոսի եւ գլխաւորացն Պետ-
 րոսի եւ Պողոսի:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ (Շար.)

Յաջորդ օրը Թագաւորը առջեւը բերել տուաւ Գրիգորը, և սիրալիր խօսքերով զուկց անոր մինչեւ այն առնէն ցոյց տուած հաւատարմութիւնը, և մեծամեծ խորհուրդներով ու սպառնալիքներով յորդորեց իր կամքը կատարելու: Գրիգոր անվեհեր արիւնքով իր կամքը իրականացաւ Թագաւորին, յայտնաբարբառ քարոզեց Քրիստոսի Վարդապետութեան ճշմարտութիւնը, ցոյց տուաւ կուսքերուն ոչնչութիւնը, յանդիմանեց հեթանոսներուն յիմարութիւնը և ըստ թէ՛ Աստուած չճանչցող անոր չհնազանդող կառաւարտները աւելի վատթար են քան գրաստները որոնք կը ճանչնան իրենց տէրը և իրենց տիրոջ մատուցած Զաւրացաւ Թագաւորը և հրամայեց որ Գրիգորին ձեռքերը ետեւը պրկեն, բերնին սանձ գնեն, շաւկը կապեն աղի խոշոր շաւաղիկներ. կուրծքը գելարանով ծնշեն, և գելարանին կապերուն մէջէն չուան անցընեն ու մեքենայով քաշեն հաննէն գլինքը և կախեն սպարանքին ըստ ըստ անհաշիւ առատապէս: Եթէ օր այնպէս մնաց արի նահատակը, և ապա դարձեալ բերուեցաւ Թագաւորին առջեւը, ուր հրաշալի իմաստութեամբ պարզեց Քրիստոսեկեց համար պատրաստուած յաւիտեական վայելքները, իսկ կռապաշտից սահմանուած անվերջ տանջանքները:

Թագաւորը բարկացաւ և հրամայեց որ անիկայ մէկ ոտքէն զլիւկալը կախեն, և տակէն աղբ ծխեն, և դալար բիրերով սաստիկ հարսուածեն: Տասը հոգի տանջեցին զանիկայ Թագաւորին հրամանին համեմատ: Եւ այնպէս կախուած մնաց եօթը օր այլ կրած տանջանքները ոչինչ համարելով կը խօսէր Աստուծոյ հետ, կ'աղօթէր իր ընթերականերուն համար: Իր մօտ գտնուող ատենակալ գալիւնները ամէն ըսածները կը գրէին և Թագաւորին ցոյց կու տային:

Նորէն հանուեցաւ Թագաւորին առջեւը, որ տես-

նելով անոր անգորգուելի հաւատքը հրամայեց անոր սրունքները կոճղերու մէջ գնել և առաստնով պրկել պնդել: Ճշմունքին աստուածութենէն ոտքի մատներուն ծայրերէն ոկուաւ արիւն հոսիլ:

Բայց ասով ալ Թագաւորին սիրտը չպազեցաւ. հրամայեց որ հաննէն սրունքները կոճղերէն, երկաթե գամեր բերեն և զարնեն ոտքին տակը, և ձեռքէն բանած ասդին անդին քայլեցնեն զանիկայ: Ամբողջ գետինը ներկուեցաւ Սուրբին արիւնով. բայց ան՝ երկնային վարձքերը միտքը բերելով կ'ուշախառնար հոգւով:

Ապա Թագաւորին հրամանաւ աչքերը ուժգնօրէն կռփահարեցին:

Յետոյ կռնակի վրայ պառկեցուցին, գլուխը ճշմարտանի մէջ դրին, քիթը անցուցին եղէգէ փող մը և անկէ աղ, բորակ և բարկ քաջաթի լեցուցին:

Բերին ապա մաղէ խոշոր պարկեր և մօբերով լեցընելով և գլուխը անցընելով վզէն կապեցին, և այնպէս մնաց վեց օր:

Թագաւորը դարձեալ զանիկայ հարցաքննելէ վերջ ոտքերը կապած կախել տուաւ գլխովալը, և ձագարով երաստանն ի վար ջուր լեցնել տուաւ, այնպէս որ փորը ուռեցաւ և քիթէն բերնէն ջուրը գուրս գալ սկսաւ:

Յետոյ վար իջեցուցին զինքը, և երբ արհամարհեց կուսքերը իրրեւ կռածոյ, կոփածոյ, քերածոյ հաստուածներ, Թագաւորին հրամանին վրայ երկաթե քերիչներով սկսան անոր կողերը քերել. և անոր արիւնով ուռուեցաւ գետինը:

Վերջը սակառններով երկաթե տատակ բերին և գետին վրայ թաւած փռեցին: Գրիգորը մերկացուցին և տատակին վրայ ձգելով քաշկուտեցին, տատակին մէջ թաղեցին և գլուխը, այնպէս որ բոլոր մարմինը ծակ ծակ եղաւ և ողջ տեղ մը չմնաց:

Նրկորդ օրը Տրդատ նորէն առջեւը բերել տուաւ Սուրբը և վարդապար յորդորներէ յետոյ հրամայեց որ ծաւակներուն երկաթե բարձակալներ անցնեն և ըստուար դամեր զարնեն և կախեն. և այնպէս մնաց երեք օր:

Գրիգոր չարորդ օրը երբ դարձեալ տարուեցաւ Թագաւորին առջեւ, սքանչելի կերպով յայտնեց յաւրութեան Վարդապետութիւնը, բարիներուն մարմնով և հոգւով փառաւորութիւնը և շարեւուն մարմնով և հոգւով գոփաթի կրակով այրուելիքը: Ասոր վրայ Թագաւորը հրամայեց որ երկաթե պոյտերով կապար հալեցնեն և տաք տաք անոր մարմնոյ վրայ թափեն և բերնէն փորը լեցնեն: Սուրբին ամբողջ մարմինը աչքեցաւ բայց դարձեալ չմեռաւ, և ինչ որ հարցնէին կը պատասխանէր:

Թագաւորը մէկ կողմէն զարմացած ապշած քաջարի նահատակին այսչափ համբերելուն և մահաւանդ այնքան անմիջանքներէ վերջը ողջ մնալուն վերայ միւս կողմէն զայրացած իր կամքը կատարել տալ չկարենալուն համար, աւազանին ժողովի

կանչեց. որպէս զի նոր հնարք մը գտնէ զանիկայ յաղ-
թահարելու կամ մեռցնելու: Այն ատեն Տաճատ,
Աշոցայ Տէրը, որ Կեսարիոյ մէջ Գրիգորը տեսած էր
և անոր ով ըլլալը գիտէր, Արտաւազդ Մանգակու-
նին, Հայոց Սպարապետին ձեռքով թագաւորին հա-
կըցուց որ Գրիգոր արքայապան Անակին որդին է:
Ասոր վրայ թագաւորը հրամայեց որ անմիջապէս
Գրիգորին ոտքերը ձեռքերը և վիզը կապեն և տանին
Արտաշատի խոր վերապը նետեն որ մեռնի:

(Շարունակելի)

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ „ՆՍԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԶԷՆ

ԴԻՐԷ Ա.—ԳԼ. ԺԱ.—Խաղաղութիւն ստանալու
եւ յառաջդիմութեան եռանդին վրայ:

Մեծ խաղաղութիւն կրնայիմ վայելել, երբ յու-
զեկմբ ուրիշներու խօսքերուն ու գործերուն եւ մեր հո-
գածութեան զիտարեւող քաներու զբաղից:

Ինչպէս կրնայ երկայն ասեմ խաղաղութեան մեջ
մնայ այն մտողը՝ որ ուրիշի գործերուն կը խառնուի,
որ արտաբանս առիթ կը փնտռէ, որ ինչ կամ ցանցառ
ի ներքուս ինքը զինքը կ'ամփոփէ:

Երանի՜ միամիտներուն, որովհետեւ մեծ խաղա-
ղութիւն պիտի ունենան:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ՔԱՀԱՆԱՅԱՅԵՐԸ ԵՒ ԵԿԷՆԵՑԻՈՑ ՀԱՍԱՐ (•)

Մարտ ամսուն, Տիւրքիայի Կարդինալը, «Քա-
նայապետին և Եկեղեցւոյ համար» ընկերակցութեան
պաշտպանն ու ընդհանուր անօրէնը, ծաղաղոյս Քա-
հանայապետին քով պատգամաւոր կը զրկէր Գերա-
պատիւ Յ. Օթիէն, ընդհանուր քարտուղարը,

Ն. Արքեպիսկոպոս, այն պարագային մէջ, հաճեցաւ
հաստատել ընկերակցութեան վերջնական կանոնները,
և շնորհել անոր անդամներուն շատ աւանանշանոր-
հութիւններ և ներողութիւններ:

Սրբազան Հայրը այս բարեացակամութեան բարձր
և թանկագին նշաններով շնորհեցաւ:

Ապրիլ 28ին գրեց Ն. Վսեմութեան Առաքելա-
կան Թուղթ մը, որուն ծանրակշիւ կարեւորութիւնը
ակներեւ պիտի տեսնուի:

(•) Տե՛ս Թիւ 98, էջ 364.— Այս ընկերակցութեան
մասին տեղեկութիւն առնուլ ուղղը կրնայ գիտիլ հե-
տեւեալ հասցէին. M. l'Abbé J. Ogier, secrétaire gé-
néral, 14 Rue Someiller, à Annecy (Haute Savoie):

Այս թուղթին հետ սիրալիր նամակ մը զրկէր է
Ն. Վսեմ. Մէրի տէլ Վալ Կարդինալը:

Հոս ուրախութեամբ կը հրաւիրուինք այս աշ-
կալ պաշտօնական թուղթերը:

ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՆ

Կը հաստատենք և կը յանձնարարենք Քա-
հանայապետին եւ Եկեղեցւոյ համար Ընկե-
րակցութիւնը և անոր վարչական կանոննե-
րը: Մեր սիրելի որդիներուն, որ անոր ան-
դամ են, կը մաղթենք Աստուծոյ երջանկու-
թիւն և փրկութիւն, եւ բոլոր սրտանց կը
չնորհենք իրենց առաքելական օրհնութիւն:

ՊԻՍՏՔԱՀԱՆԱՅԱՅԵՐ Ժ.

21 Մարտ 1913

Նամակ Ն. Վ. Մերի տէլ Վալ Կարդի-
նալին առ Ն. Վ. Տիւրքիայի Կարդինալ,
Արքեպիսկոպոս Շամպիէի:

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԻՒՆ
Ն. ՍՐԲՈՒԹԵԱՆ

Թիւ 64,066

Վասիկան, 4 Մայիս 1913

Վսեմաշնոյ՜ք Տէր,

Շատ հաճելի է ինձի փոխանցել, այս
ծրարով, Ձեր Վսեմութեան, շնորհաւորական
և քաջալերական գիրը, զոր Ն. Սրբութիւնը
հաճեցաւ Ձեզի ուղղել իբր պատասխան այն
տեղեկագրին, զոր Ձեր հիմնած և ղեկավա-
րած Քահանայապետին եւ Եկեղեցւոյ համար
քահանայական միջազգային ընկերակցութեան
մասին՝ զրկած էիք իրեն վերջերս:

Այս պատուական թուղթը, որ մեծ միտի-
թարութիւն և գոհունակութիւն պիտի պար-
գեւէ Ձեր Վսեմութեան, և այդ փրկաւէտ և
ժամանակայարմար Ընկերակցութեան անդա-
մակից քահանաներուն, պիտի նպաստէ, փա-
փաքելի է, աւելցնելու նոյնին անդամները և
համակիրները:

Ձեր Ընկերակցութեան ուղղած շնորհա-
ւորութիւններուն եւ սրտագին բարեմաղ-
թութիւններուն հետ, կը խնդրեմ, Վսեմա-
շնո՛ւք Տէր, հաճեցէք ընդունիլ խորին յար-
գանքիս հաւաստիքը, որով պատիւ ունիմ
ըլլալու Ձեր Վսեմութեան ամէնէն խոնարհ
և անձնանուէր ծառան:

ԿԱՐԴ. ՄԵՐԻ ՏԷՆ ՎԱԼ

Թուղթ Ն. Ս. Պիոս Ժ.ի առ Ն. Վ. Տիւ-
պիյեար Կառդինալ, Արքեպիսկոպոս Շամպե-
րիի:

ՊԻՈՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ Ժ.

Առ մեր սիրելի որդին Ֆրանչիսկոս-Վի-
գիլիոս Տիւպիյեար, Կառդինալ-Բահանայ հռո-
մէական Ս. Եկեղեցւոյ, արքեպիսկոպոս Շամ-
պերիի:

Սիրելի որդի մեր,

Ողջո՛յն և առաքելական օրհնութիւն:

Քահանայապետին եւ Եկեղեցւոյ համար
քահանայական միջազգային Ընկերակցութիւ-
նը, զոր դուք հիմնած էք և որուն ընդհանուր
անօրէնն էք հիմայ, որչափ գովուի քիչ է.
եթէ նկատի առնուի անոր մեծ շահեկանու-
թիւնը և միանգամայն պատեհութիւնը: Ար-
դարեւ անոնք որ, դիւին սաղարանքով, արդ
ևս հետամուտ են եռանդազին վազեմի
նպատակին՝ արգիլելու յաւիտեանական փրկու-
թիւնը, զոր աստուածային Կենարարը պար-
գեւեց մարդկային ազգին, ի գին իր բոլոր
արիւնիին, այդպիսիք ամէն բանէ աւելի կը
բաղձան հեռացնել մարդկութիւնը հաւատքէ
և Եկեղեցւոյ և հոռմէսկոն Քահանայապե-
տին յարգութենէն: Քաջ գիտեն թէ Յիսուսի
Քրիստոսի հարսին և իր փոխանորդին նկատ-
մամբ անտարբեր եղողը զինքն ալ չի սիրեր:
Ահա այս պատճառաւ՝ յաւէտ կղերը նշաւակ
է զեղծ մարդոց նենգուպատիր մեքենայու-
թեանց. անշուշտ եթէ կղերականք պարտա-
զանց գտնուին, հաւատացեալք դիւրաւ կը
հետեւին անոնց օրինակին: Ուստի ամէն կեր-
պով աշխատելու է որ Ս. Աստիճաններով
ճոխացած անձերու՝ Եկեղեցւոյ և անոր Գըլ-
խին նկատմամբ ունեցած սէրն ու յարգան-
քը եւս քան զեւս առաւելու: Պէտք է որ
ամէն բանէ աւելի բորբոքած ըլլան այս մա-
սին սրբազոյն եռանդով մը և զայն ուրիշ-
ներու ալ հաղորդեն:

Արդ զլիսաւորաբար այս նպատակաւ հաս-
տատուած է Ընկերակցութիւնը, որուն վրայ
կը խօսինք: Անոր անդամները ուրիշ քահա-
նայից պարտքերէն տարբեր պարտքեր չունին.
սակայն զանոնք աւելի մեծ եռանդով կը կա-
տարեն:

Մեզի ամէնէն հաճելին այս է որ, անոնք
ամէն բանէ առաջ կ'որոշեն վեհանձնօրէն հը-
պատակիլ Հռոմի Քահանայապետին՝ ամէն
հրամաններուն և պատուէրներուն, ինչ որ
ալ ըլլան. և կը խոստանան եռանդեամբ աշ-
խատիլ ուրիշներու մտքին մէջ ալ նոյները
խորամուկ զրոյմելու:

Մեզի շատ հաճոյ է նաև՝ որ փոյթ տա-
նին քաջալերելու իրենց բոլոր ուժովը այն
կաթողիկէ օրաթերթերը կամ պարբերական-
ները, որ ճակատաբաց կը պաշտպանեն կրօն-
քի զատը՝ առաքելական Գահին առաջնոր-
դութեան տակ:

Ասկէ դատ, ի տես ազքատութեան, ուր
կը գտնուի Քրիստոսի Փոխանորդը, նկատի
կ'առնուն թէ բաւական չէ ձեռնտու ըլլալ
ամէն տարի. ուխտով իրենք զիրենք այս
բանիս կը պարտաւորեն: Այս մասին արժանի
են անշուշտ թէ՛ մեր գովութեան և թէ՛
Աստուծոյ մասնաւոր վարձատրութեան:

Ուստի մեր երախտապիտութիւնը այս սի-
րելի որդւոց յայտնելու և միանգամայն իրենց
ձեռնարկը աւելի պտղաբեր ընելու համար,
նորերս իրենց շնորհեցինք շատ ներողութիւն-
ներ Եկեղեցւոյ գանձէն, որուն մատակա-
րարն ենք:

Դարձեալ կը յայտարարենք ձեզ թէ կը
վաւերացնենք և կը հաստատենք Ընկերակ-
ցութեան կեդրոնական վարիչ ժողովին կազ-
մութիւնը, ինչպէս որ մեզի առաջարկած էիք:

Արդ՝ խնդրելով Աստուծոյ որ հաճի պաշտ-
պանել այսքան լաւասկիզը ձեռնարկ մը, իբր
զրաւական երկնային պարգեւներու և ի նշան
մեր մասնաւոր բարեացակամութեան, առա-
քելական օրհնութիւնը, կը շնորհենք բոլոր
սրտանց, սիրելի որդի մեր, Ձեզի ինչպէս
նաեւ ամէն անոնց որ անդամ են կամ պիտի
ըլլան այդ Քահանայական Ընկերակցութեան:

Տրուած ի Հռոմ, Ս. Պետրոսի մօտ, 1913
Ապրիլ 28ին, մեր Քահանայապետութեան սաս-
նեւորդ սարին:

ՊԻՈՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ Ժ.

ՏԵՅԻՇԻԼՍԵՁ !...

Ի՞քի տէլիզանլըլար զայէթ սիւրաթլա ա-
տէթա ուչուլորլարտը : Բաքիսլ օլտուզլարը
օթօմօպիլին արգասընտան պուլուլթ կիպի
պիր թօզ վէ դուպար գալգըլորտը :

Օթօմօպիլի իտարէ իտէն Լէսթօք սիւրա-
թա մէֆթուն իտի : Բօլիթէքնիք մէքթէ-
պինտէն նէչէթ իթմիշ, ֆիքրի՝ տահա թագէ
իլմին շէպնէմիլլէ մէշհուն օլտուղընտան,
քէնտի քէնտիսինի ատէթա թահթը հիւք-
միւնէ ալըպտա քէշֆ մա եէշա իտարէ իթ-
տիլի էրքեանըն սահիպի վէ բատիշահը զը-
յաս էլլէյորտը :

Բէֆիգի պուլուլնան թէքսի իտէ, հէր նէ
գատար տա ըիյաղիյաթլա պաշընը հօրմամըշ
իտի իտէ տէ, քիպր ու դուրուրը ինսանի պա-
տէսիլլէ տէ սէրմէսթ օլմամըշ էյի վէ գալպի
թէմիգ պիր էֆէնտի իտի :

Նակեհա, օթօմօպիլ, չիմէնդար իլէ մէֆ-
րուշ օլան վէ պիր մէնդարէյի թապիլլէյի
լաթիֆէ իրայէ իտէն պիր քէօյճիլէզ էօնիւն-
տէ թէվազգուֆ էլլէտի : Պուրատա էն ճա-
լիպի նաղար օլան պինա, մուհագգաշ կրա-
նիթ իլէ ինշա իտիլմիշ օլուպ, մէվլիի իհ-
թիրամը իշլալ էլլէյէն էսկի պիր քիլիսա իտի :

— Պա՛գ, Լէսթօք, շու մէնդարէյէ, օն
իւչիւնճիւ ասրտան գալմըշ օլան շու քիլի-
սայա, ճէվհէր տանէսի կիպի կիւզէլ շու պի-
նայա նէ՞ տէքսին :

Լէսթօք քէնտի մաքինասըլլա մէշդուլ
պուլուլնաղընտան, կէօզլէրինի գալարըլպ
պագմաղա պիլէ թէնէզզիւլ իթմէտի : Ֆա-
գաթ պիր թէպէսսիւմի իսթիհգաքհարի իլէ
օմուզլարընը սիլքէլէրէքշու սուրէթլէ ճէվապ
վէրտի :

— Զաթէն սէն օն իւչիւնճիւ ասր տէմին
իլէ հէր շէյի սէօլլէմիշ պուլուլնաղընտան : Օն իւ-
չիւնճիւ ասր տէմէք, ասըն հաղըրլա հիշ պիր
միւհասալպէթի օլմայարապ արթըզ մօտասը
կէշմիշ, քիւհնէլլէմիշ տէմէք տիր : Իշթէ
սէնին ֆիլիսան տա օն իւչ ասըլըզ պիր իս-
թիյար տէմէք օլտուղընտան, օ արթըզ զէ-

մանըմըզ իչին հիւքմիւ պարիտ օլմուշ պիր
շէյ տիր : Եվվէթ, ֆիլիսա կէշմիշ զէմանա
այիտ պիր աճուզէ տիր... արթըզ օ հիշ պիր
շէյէ հարամաղ : պիր քէրրէ էթրաֆընա պագ
հէր շէյ թէպէտտիւլ իթտի, տիւնեա իլէրի
կիթտի, եսլընըզ սէնին քիլիսան կէրիտէ
գալտը :

«Պու նէ՞ գատար թէքագըլար :... պու-
կիւն իշթէ օթօմօպիլ իլէ ուչուլորըզ, պա՛գ,
հէմ տէ նա՞սըլ ուչուլորըզ : Ինսան պուլնա
հայրէթ իտէր : Հալպու քի ֆիլիսա սայիան-
կէօզ աշաղը իլէ սիւրիւնմէքտէ տէվամ իտի-
յօր... »

«Ինսան պու կիւն թապիսթա հաքիմ
տիր, հըլտըլլարա գատար նուֆուլ իտիպ,
օնլարը քէշֆ էլլէյօր : Մատաէնին էսրարընը
թամիգ իտիյօր, արատա օլան մէսաֆէնին
ուզաղըլընա պագմագսըլըն քիւրրէյի սըղըն
հէր թարաֆըլա մուխապէրէտէ պուլուլու-
յօր, հալալարա գատար պիլէ եիւքսէլլիյօր :
Ֆիլիսա իտէ հիշ պիր շէյ ֆէթհ իտէմէմիշ
տիր... պու կիւն օնուն տախիլլիտէ հիշ
պիր եէնի հագիգաթ հօգ տիր, օնուն մէթոտ-
լարընտա էսէրի թէքէմիլլէ մէֆգուտ տըր...
եիւրիւմէյօր :

«Ֆիլիսա տա էֆքեարը ճէտիտէյի թա-
գիպ իթմէլի իտի : Ոորհուրդլարընը թէտըզ
իթմէք, ազայիտինի թէֆթիշ էլլէմէք վէ պա
խուսուս եէնի պիր մօրալ վաղ իթմէք իշուն
իլմին մուալլէնէթինէ միւրաճաաթ էլլէմէլի
իտի :

«Ոայր, օ տայիրէի հարաքէթին իտիր-
ճինտէ աուրմըշ տըր : Իլմին, էֆքեարըն իս-
րիճինտէ աուրմըշ տըր : Պու կիւն ազայիտ
պիլիմ ֆիքիլլէրիմիլի արթըզ պօղուլյօր...
պիլլէ հիւրիլլէթ լալըմ տըր :

«Պէնիմ կիպի սէն տէ կէօրիւլյօրսուն քի,
հէր շէյ տէյիշմիշ տիր... էօլլէ իտէ ֆիլիսա
տախի տէյիշմէլի տիր... »

*
**

Թէքսի, Լէսթօզըն կէվէզէլլիքլէրինի գա-
թէն թանրտար : Հիշ միւթէէսսիր օլմագսըլըն
օնուն միւքեալէմէսինի տիւլէտի վէ միւհա-
սիպ ճէվապ վէրէպիլմէք իչին ֆըրսաթ ին-

Թիզար էլէյօրտը: Հէման պու սըրատա Լէս-
թօք մաքինայր պիրտէն չէվիրտի վէ օթօ
տուրտը:

Թէրսի էվէլէ էմրտէ պու զարիպ հալէ
թէաճճիւպ իթտի իսէ տէ, ազ սօնրա հիք-
մէթինի անլատը: Նիրմի մէթրօ ուզագտա
պիր եան սօգագտան պիր ճէնագէ ալայը չըգ-
մըլ օթօնըն միւրուրընա մանի օլույօրտը:

Իխթիյար պիր քէօյլիւ քէմալը վագարլա
նաչը կէօթիւրիւյօրտը... քահանալար վէ
դպիրլէր տախի բէք էսկի պիր մագանտա
շարականլար օգուեարագ արգատան կէլիյօր-
լար, պուլարտան սօնրա սէքիզ գավի էլ
պիւննէ քիմսէլէր թապուլթը կէօթիւրիւյօր
վէ տահա կէրիտէն իսէ գարըլար վէ էրքէք-
լէր աղլայարագ էօլիւյիւ թաագիպ իտիյօր-
լարտը:

Պու մէնգարէ Թէրսինին ֆիքրինտէ պիր
չօգ խաթրէր վէ տէրին թէֆէքքիւրլէր ու-
յանտըրտը:

Ձանն իտէրսին քի օ՝ պու ճէնագէ ալա-
յընտա Բիլիսանըն տէհիրտէն տէհիրէ աջի
Սաղմուլարը թէրէննիւմ իտէրէք ինսանլարա
աջի վագիֆէյի իքմալ, աջի աճըլարը թէ-
սէլլի էլէտիյինի վէ էօլիւմ հէր զէման ի-
չուն, հէր տիյար իչուն աջի օլտուզընտան,
էճէլին աչտըղը աջի եաքալարը թատիլ իթ-
տիյինի կէօրիւյօրտը: Նիրմինճի աար վալի-
տէլէրինին տէ օն իւչիւնճիւ աար վալիտէլէ-
րի կիպի ճիկէր բարէլէրինին արգասընտան
աղլատըղընը կէօրիւյօր, վէ, պիտայէթի թէէ-
սիսինտէն պէրի հէր-կիւն կէօրտիւյիւ վէ
պու կիւնքի իւմին մահվ ու իզալէ իտէմէ-
տիյի էլիւմ պիր մէնգարէյէ, եէտի հիւզ սէ-
ղէլիք պիր մէվճուտիյէթտէն սօնրա, կրա-
նիթտէն եաքըլմըլ օ կիւզէլ Բիլիսանըն իչ-
թէ պիր քէրրէ տահա հագըր օլտուզընը թէէ-
միւլ իտիյօրտը:

Թէրսի. ֆէվզ էլ ատէ միւթէէտիւր պիր
հալտէ տօսթուհուն զօլունտան թուլուպ,
թապուլթը իրայէ իտէրէք օնա չէօլէ սէօյլէր:

— Նէ՞ տէրսին, պու տա տէյիլտի՞ մի:

Վէ մատամ քի Լէսթօք տախի միւթէէս-
սիր օլմուշ էպքէմ գալմիշտը, Թէրսի եա-
վաչճա սէօղիւնէ տէվամ իտէրէք:

— Իւմ պուլնա չարէսագ օլամագ... Ին-
սանըն՝ մահվընա միւվէֆֆագ օլամատըղը էօ-
լիւմ գարչընտա իւմ տախի աճիզ գալըր...
վէ իչթէ պու էօլիւմտէն սօնրա տըր քի.
թաափլ, թէպտիլ իչուն էլ ուզատամատըղը-
մըղ աարլ տէյիլիւմէզ հալ գահիր օլուր... Պագ
ագիզիւմ, Բիլիսա տա տէյիլիւմէն իչուն տէ-
յիլ, իլլա տէյիլիւմէզ օլան պիր էպէտիլիք
իչին չալըշտըղընտան, օնուն տա տէյիլիւ-
մէսինէ արթըզ հիչ թէաճճիւպ իթմէմէլի.
Բիլիսա տայիմի սուրէթտէ սապիթ օլան պիր
չէյ իչիւն չալըշտըղը միւնասիպէթլէ, քէն-
տինին տէ հէր վագըթ սապիթ գալմասը
թապիի տիր» տէր:

Պու սըրատա ճէնագէ իլէրիլէյօր վէ օթօ-
մօպիլի կէլիյօրտը:

Թէրսի շապգասընը տչտը, Լէսթօք տա
էօլէ եաքտը:

Թապուլթ պու իքի տէլիգանլընըն եա-
նընտան կէչտիյի սըրատա. Լէսթօք աճէպա
թէէսիւրի գալպինտէն մի եօգսա ատէթի
գատիմէ նէթիճէսի օլարագ մը, էլինի ալիւ-
նա, կէօքսիւնէ վէ օլմուզարընա կէօթիւրէ-
րէք կիւզէլ պիր խաչ չըգարըր վէ ալայըն
քեամիլէն միրուրընտան սօնրա, Լէսթօք ա-
տէթա պիր տէրին ուչոլունտան ույանըրճա-
սընա, տօսթունա խիթապէն,

— Բէք իթիմալ տըր քի, տէտիքլէրին
հագգըր տըր, տէտի:

*
* *

Լէսթօք թէքրտը մաքինայը չէվիրիր, օ-
թօմօպիլ եինէ ուչույօր տէնէճէք պիր սու-
սուրէթտէ իլէրիլէր:

Վէ պու իքի տէլիգանլըլար ֆէվզ էլ ատէ
պիր սիւրաթլա սալուշուպ կիթտիքլէրի,
էօմրիւ պէչէրին տէյիլիւմէզ օլան էպէտիլիյէ
տօղլու եօլճուլուզընըն պիր միալի օլան հա-
րէքէթլէրինտէ տէվամ իթտիքլէրի սըրատա,
քահանալար աղլայանլարըն գուլագլարընա
էպէտի թէսէլլի նաղմէլէրի թէրէննիւմ իթ-
մէքտէ տէվամ իտիյօրլար վէ օնլարըն բիշի
էնգարընա, քիւրրէյի արզըն թէպէտաիւլ վէ
թէհապիւլիւթըլա հիչ թէհապիւլիւթ թապի
օլամայան էպէտի հագիպիթ ուֆուզլարը արլ
իտիյօրլարտը:

ՀՈՂՆ ԱՐԳԱՒԱՆՆԵՐ

Մայր Հայաստան կը պաղտաթի .
Մրտակեցե՛ք՝ նամանաւանդ
Հայրենիքի հողն արգաւանդ,
Սիրքը զոյց մատաղաթի:

Մեր հոգին բո՛ղ խանդաղաթի,
Զլեւն այս բարեւաւ անդ,
Մեր նախահաւց անեղծ աւանդ,
Յայս հանրութեան եւ անհաթի:

Ահա՛ փչեց անոյց հարաւ,
Զիւն ու սառոյց առաւ տարաւ,
Բերաւ զարուն բազմաբեղուն:

Օ՛ն նրբիւնեմ այս կոյս հողուն
Մեր նակեթն շաղն աւաւտեմ,
Որ հայրենիք ծաղիկն նուրբն:

ԽԱՅԻԿ Վ. ԱՅԱՆԱՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՌՈՍ ԵՒ ԿԱՅՈՂՆԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Ս. Հայրը Մայիս 27ին, նախընթերցէն յետոյ,
զորոյս մը ըրաւ Վատիկանի պարտէզներուն մէջ իր
մատարանապետ Արհի. Բէշլիի ճեռ:

Ի դարձին, Պիոս Ժ. ընդունեցաւ խումբ մը ուխ-
տաւորներ, որոնց կարճ բանախօսութիւնն մը ուզեց,
բարձրաձայն արտասանութեամբ, որ ամէնուն նկա-
տաւորութեան առարկայ եղաւ:

Ս. Փիլիպպոս Ներիի, Հռոմի առաքեալին,
Աղօթաւանքի (Oratoire) Տիմոթայի տունը մեծ հան-
գեսով կատարուեցաւ, մասնաւորապէս Սրբուհի-Մա-
րիամ in vallicella մէջ, ուր կը հանգչին անոր մար-
մինը և կարգ մը ուրիշ եկեղեցիներու, մատուաներու
և աղօթարաններու մէջ, ուր ի կենդանութեան, կը
յաճախէր Հռոմի այս ժողովրդասէր առաքեալը:

Վիեննայի նորընտր իշխան-արքիպիսկոպոս
Բիֆլ Գերապայժառին եպիսկոպոսական ձեռնադրու-
թիւնը կատարուեցաւ, Ն. Արհի. Վիեննայի առա-
քեալական պետական, կոմս Սթափնէլլիի կողմէ, Գլխ-
թեր-Նայպոլերի հոյակապ եկեղեցւոյ մէջ, Յունիս Վին:

ՀԱՅ ԿԱՅՈՂՆԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Յունիս 7ին Ս. Գրիգոր Լուսաւորիչի նշխարաց
դիւտին յիշատակը հանգիստաւորապէս տօնուեցաւ Ա-
ւագ Թեմի մէջ, Երկրորդ օրը, կիրակի, Ս. Աստուա-
ծածին Աթոռանիստ եկեղեցւոյ մէջ Ս. Լուսաւորչի

վրայ գեղեցիկ ներդրեան մը խօսեցաւ Գեր. Կղեմէս
Վրդպ. Աստուերեան, նոյն եկեղեցւոյ մեծաւորը: Պա-
րսկէն վերջը թափոյրի հոնուեցաւ Ս. Գրիգորի նշխա-
րը, զոր ապա համբարեցին ամէնքը ջերմաւանդաւ-
թեամբ:

Յանաւարքի կղերականին մէջ Ս. Գրիգոր
Լուսաւորչի անին օրը, Պատարագ մատոյց Գեր.
Յովհաննէս Վրդպ. Նալպանտեան: Երգեցողութիւն-
ները կատարեցին նորընծայ ուսանողները, հայկական
նօթայն վրայ, բաւական յաջողութեամբ: Ժողովուրդը
ներկայ էր խումբ մագմութեամբ: Այն օրը նորընծա-
յից զուարճայի ժամանց մը տրուեցաւ, ուր հաճո-
յական անակնկալ մը եղաւ Հոգեւոր Տիրոջ կողմէ
ղրկուած անուշեղէնը:

Կոստանդնուպոլոս Առաքելական Նուիրակ
Արհի. Սարաի Գերապայժառը Յունիս 6ին մեկնեցաւ
դէպ ի Խոպիս: Ամենապատիւ Գերերջանիկ Հոգեւոր
Տիրոջ կողմէ մինչեւ նաւը ողջերթի գացին Արհի.
Ռոբոսեան, Կ. Պատրիարքական փոխանորդը և Գեր.
Յակոբ Վ. Մաղարեան:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Կ. Պոլէն կը գրեն Էֆօ օր Բառի Յունիս 4
(Տ.) թուականով. — «Բ. Դուռը պատասխանելով
Հայկական խորոյն վրայ խօսող գեաղաններուն, յայ-
տարարեր է թէ Արեւելեան նահանգներուն մէջ գոր-
ծադրուելիք բարենորոգմանց համար բնաւ չպիտի ըն-
դունին տէրութեանց հակադէմքը: Կառավարութիւնը
այս կերպով պատասխաներ է նաեւ հայ երեւելինե-
րուն»:

Եւրոպական լրագիր մը այս մասին կը գրէ.

Բ. Դուռը գեկոյց դեսպաններուն թէ իր բարենո-
րոգական ձեռնարկներուն համար միջազգային հակա-
կելիո չպիտի ընդունին: Ուրեմն այս բարենորոգումները
մնացածին բաներ պիտի ըլլան, այնպէս կ'երեւի թէ
վերջին դէպքեր բան մը չեն ստիճեցուցեր Բ. Դուռն: Բ.
Դուռը Ասիոյ մէջ իրեն մնացած երկիրներուն մէջ պի-
տի գործադրէ այն հնաւուրց դուրքիւնը որ պատճառ
եղաւ իր կործանմանը Եւրոպայի մէջ: Այս ուղղու-
թիւնը Օսմ. կառավարութեան ապագայ բաղադրա-
ւորութեանը նկատմամբ շատ փոփոխութիւն կը ներ-
շնչէ: Ցաւալի է որ Օսմ. ճեռքիւնը զուրկ է իր ող-
բալի սխալներուն հակադէմքը կատարութեանը»:

Ռիւզէր հրատարակեց հետեւեալ զեկայքը. —
«Խաղողութեան ժապով փակեց իր նիստերը: Հաշ-
տաւթեան պատուիրակները վերջնապէս բաժնուեցան,
միաձայն ընդունելէ ետք սերտ պատուիրակ Մ. Բազ-
լովիչի առաջարկած հետեւեալ որոշումը. «Հետամուտ
ըլլալով համախումբ գործադրելու 1913 Մայիս 17/30ի
հաշտութեան դաշնագրին 7րդ յօդուածը, ժողովին
մէջ ներկայացուցիչ ունեցող երկիրներուն պատուի-
րակները ընդունեցին թէ աւելի դիւրաւ կորելի պի-
տի ըլլայ վերջնական արգիւնքի մը յանդիմ, եթէ խա-

դադու թեան դաշնագիրը ամբողջանալու անջատորէն պատկանեալ կառավարութեանց միջեւ կնքուած պայմանագրութիւններով: Հետեւաբար որոշեցին. Ա. Պալքանեան կառավարութիւններուն թողուլ իրենց միջեւ այսպիսի պայմանագրութիւններ կնքելու հոգը: Բ. Այսօր փակել ժողովին նիստերը:»

*. Գունիս Յին գումարուէր է Բարիկի ելմա-կան ժողովը, և որոշուէր է որ աշխատութիւնները կատարուին կամ լիակատար գումարումներով և կամ մասնագիտական յանձնախումբերու միջոցաւ: Չորս մասնագիտական յանձնառումք կազմուեցան: Իւրաքանչիւր Պետութիւն պիտի ունենայ երկու պատ-ուիրակ, բայց ի թուրքիայէն, որ պիտի ունենայ երեք պատուիրակ: Երազիրը կ'ըսէ թէ ժողովին որոշումե-րը լոկ յանձնարարութեան արժէք պիտի ունենան:

*. Վիեննայի քաղաքական շրջանակներուն մէջ Պալքանի կացութիւնը շատ ծանր կը նկատուի, բայց յոյս կայ որ կարելի պիտի ըլլայ պատերազմին ա-ռաջը առնել: Մեծ Տերութիւնք ազդու գիւտումներ կ'ընեն, և Ֆրանսա յայտարարէր է թէ պիտի մերժէ ընել դրամական ու և է օժանդակութիւն Սերպիոյ, Գունաստանի և Պուլկարիոյ, մինչեւ որ անոնք չկար-գադրեն իրենց վէճը: Սօֆիայէն կը հեռագրուի սա-կայն Հալոսի թէ օտար միջամտութիւն չը միայն կրնայ առաջըն առնել սերպուպուկար կռիւի մը: Սակայն կը հարցուի թէ միջամտութիւնը այնքան արագ պիտի ըլլա՞յ, որ ազդեցութիւն ունենայ, Գար-ձեալ Սօֆիայէն կը հեռագրուի Մարթէնի թէ Պուլ-կարիոյ դէմ զինակցութեան առաջարկ եղաւ Բ. Դրան: Գունաստանի կողմէ և Ռումանիոյ ու Սերպիոյ կողմէ: Գունաստան առաջարկէր է Լաիքնէն պալ-թուրքիոյ. բայց թուրքիա պատասխանէր է թէ կ'ու-զէ պահել Եգէականի կղզիները: Ռումանիա պատաս-խանէր է թէ Սերպիա պէտք է գրաւորապէս ներկա-յացնէ իր առաջարկները: — Պուլկար լաւատեղեակ շրջանակներու մէջ կը յայտարարուի թէ պուլկար կա-

ռավարութիւնը կը խնդրէ Ռումանիայէն, որպէս զի մի-ջամտէ և Սերպիա պարպէ վիճելի շրջանակը, և սերպ-ուպուլկար բանակները համախումբ գրաւած պահէն զայն, մինչեւ որ Ռումանիոյ իրր իրաւարար վճիռ ար-ձակէ: Սօֆիայի մէջ կը սպասուի Ռումանիոյ պատաս-խանին, ըստ այնմ լուծելու համար նախարարական տագնապը: Սօֆիայի մէջ շատ գէշ տպաւորութիւն գործէր է այն լուրը թէ փորձուէր է Գունաստանի, Թուրքիոյ, Սերպիոյ և Ռումանիոյ մասնակցութեամբ դաշնակցութիւն մը կազմել ընդդէմ Պուլկարիոյ: Պալքանեան վարչապետներուն տեսակցութիւնը յե-տաձգուեցաւ պուլկար նախարարական տագնապլին պատճառաւ:

*. Եպարքոս և պատերազմական նախարար Մահ-մուտ Եէվքէթ փաշա Գունիս 11ին, Չորեքշաբթի առառու պատերազմական պաշտօնատունէն Բ. Գուռ-եկաժ պահուէն, օթոմօպիլը Պայսագիտի հրապարակէն Տիվան Եօլու դարձած աստէնը ճամբու նորոգութեան և բազմութեան հետեւանօք հարկադրուեցաւ կանգ առնել:

Նոյն պահուէն անձանթ մարդիկ օթոմօպիլին վրայ տուն անդամ գէնք պարպեցին: Յարձակման հե-տեւանօք Եպարքոսը վիրաւոր դարձաւ պատերազմա-կան պաշտօնատուն, ու կէս ժամ ետքը առած վեր-քերէն հոգին աւանդեց:

Իրենընկերացող թիկնապահը, նաւային տեղակալ Քէմալ պէյ, եւս արձակուած զնդակներէն մեռաւ:

Նախարարաց Խորհուրդը գումարուեցաւ Պատե-րազմական պաշտօնատան մէջ, և զինուորական վար-չութիւնը հարկ եղած միջոցները ձեռք առաւ ան-դորրութեան պահպանման համար:

Իբր Խճրագործներէն մին կարծուած թօփալ Գատրի անուն մէկը ձերբակալուեցաւ՝ կէտիք փա-շայի կողմը ճէմիչի մը մէջ, ձեռքը երկու արծառա-կով և քնդակներով:

Ոստիկանութիւնը խուզարկութիւններն ու քն-նութիւնները կը շարունակէ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	369
Տէր Կոմիսսա Բանանայ	371
Յիսուս Բիլիսսա	373
Ս. Հաղորդութիւնը եւ Պիոս Ժ.	375
Օրմանեանի «Հայոց Եկեղեցի» գիրքը	376
Եօթնեակ Բիլիսսանէի	378
Բահանայական միջազգային ընկերակցութիւն	379
Տէյիլիմէզ	381
Հոդն արգաւանդ	383
Տեղեկագրական	383

ՍՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽԱՐԱԳՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արճազունց Լաքարաբերի, Բեքա, Պայրամ փողոց թիւ 5, Կ. Պոլիս

ԲԱԺԱՆՈՐԻԱԴՐՈՒԹԻԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան՝ 40 դնկ. տրծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ թիւ՝ 1 դնկ.:— Արտասահման՝ տար. ժր. 10. վեցամս. 5.—Վնարմունք կանխիկ են:
ՀԱՍՅԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԵԱՆՈՅՈՒԹԻՒՆ.— 1.—Արձագանգ կը նրաստակուի Շաքաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտա-
ւորեալ չէ անպատեհաւ կամ նայութեամբ նրաստակել իրեն զրկուած ու եւ է յօդուած: 3.—Կեղծանունով զրկուած
յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել խմբագրութեան: 4.— Ձեռագիրներ եւ չեն
դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուրքի մէկ կողմը միայն: 6.— Ծանուց-
մանց համար մասնաւոր պայմանագրութիւն կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է անհրա-
ժեշտ երկու դանեկանի նամակագրութիւն ի միասին զրկել:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի նոյն եւ ի վիճակի է
որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը սպուին ամեն տեսակ ծանուցումներ, գիրքեր, տետրեր, հրատարակութեան,
խաղեր, բարդ-տարեւներ, մահաբաններ, եւն., եւն.: Դիւերը ամենցեղի կերպով ածան են: Դեղեցկագիտական նա-
ւակի եւ տպագրական մատրութեան կողմանէ յանախորդները անտարակոյս գտն պիտի մնան:

ԿԸ ԵԱՆՈՅԻ «Տարական Սկզբունք Բիւստնէական Վարդապետութեան» հաստատել եկեղեցական իշխա-
նութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Դիւն, տմար բոլորակաւ 2 դնկն.:
